ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«20» 02 2026 թ. գ. Երևան Թիվ 32-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 14-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում այլընտրանքային եղանակով իրականացվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 14-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) 5-րդ կետի 2-րդ ենթակետում «տեղակալներին» բառից հետո լրացնել «(բացառությամբ Կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումների պետերի տեղակալների (հատկապես կարևոր գործերով ավագ քննիչների))».

2) 5-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությունում «վարչության պետերին և նրանց տեղակալներին» բառերը փոխարինել «վարչությունների պետերին» բառերով:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական

կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ